

Լուս. Գրական Ընկերություն

915

ՎՍԵՄ ՀԻՄՆԱԴԻՐ ՄԸ

ՍՈՒՐԲ ԻԳՆԱՏԻՈՍ ՏԸ ԼՈՅՈՒՆ

Գրեց՝ ՆԵՐՍԷՍ ՅՈՎՍԷՓ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

«Աստուած, որ ի ասրածուն մեծագոյն փառաց անուան քոյ»
«նորոգ օգնականութեամբ զօրացուցեր զգինուորեալ Եկեղեցի
«քո ի ձեռն երանելոյն իգնատիոսի, շնորհեա զի օժանդա-
«կութեամբ եւ նմանութեամբ նորին պատերազմեալ յերկ-
«րի, արժանի լիցուք ընդ նմա պսակել յերկինս. Տե-
«րամբ մերով Յիսուսի Քրիստոսիւ՝ ամէն»

Աղօթք սիեզերական Եկեղեցւոյ



Պ. ՊՈՂԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Մ. ՍԷՔԵԱՆ

1934

Setyan

ՎՍԵՄ ՀԻՄՆԱԴԻՐ ՄԸ

ՍՈՒՐԲ ԻԳՆԱՏԻՈՍ ՏԸ ԼՈՅՈԼԱ




Գրեց՝ ՆԵՐՍԷՍ ՅՈՎՍԷՓ Վ՝ ՓԱՓԱԶԵԱՆ



Պ. ՊՈԼԻՍ

ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Մ. ՍԷԹԵԱՆ

1934



Յ. Մ. ՍԷԹԵԱՆ

ՏՊԱՐԱՆ

ԿԱԶՄԱՏՈՒՆ

ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. ՊՈԼԻՍ ԶԱՔՄԱՔՃԸԼՍՐ

№ 167

Վ Ս Ե Մ Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր Մ Ը

ՍՈՒՐԲ ԻԳՆԱՏԻՈՍ ՏՐ ԼՈՅՈՒՍ.



Եթէ ոճիր կը համարուի բարոյականի տուջև զըրպարտել աննշան մարդ մը որ ոչ ումեք է վնասած, ոճիրներու լրումն չէ՞ միթէ նախատել ու զրպարտել վսեմ անձնաւորութիւն մը որ գերագոյն առաքինութեանց աիպար մ'է եղած, որ իւր կենօք և իւր գործերով Հաւատոյ և բարոյականի անսպառ բարիքներն է սփռած բովանդակ մարդկութեան մէջ, և որ կը շարունակէ իւր գերազանցօրէն փրկարար գերն յընթացս դարուց աշխարհի հինգ մասանց մէջ, կիսավայրենի ժողովուրդները բերելով ի քաղաքակրթութիւն, և քաղաքակիրթներն զգուշացնելով վրիպալից և ստանուն յառաջդիմութեան մը վտանգներէն ու աւերումներէն:

Մաղթենք որ սոյն համեստ գրքոյկն յաջողի՝ օրհնութեամբ Բարձրելոյն՝ ջնջել մեր մէջէ կարի յոյժ երկարատև ու համատարած նախապաշարումներ, և հեռանալով օտարազգի ամբարիշտ ու քրիստոսամարտ գրողներէ, նմանինք Հին և Նոր աշխարհի ազնուամիտ և Աւետարանի պայծառութեամբ լուսաւորեալ հոգիներու, որոնք չուրջ չորս դարէ ի վեր մեծագործ Սուրբի

մը անուան և պատկերներուն առջև ծնրագիր՝ կը խնդրեն անոր պաշտպանութիւնն հզօր և կը ջանան հետեւիլ իւր դիւցազնաշունչ և սրբադուցիչ օրինակներուն : Ո՛հ, դադրինք սրբամա՛րա լինելէ... :

Ա.

Իգնատիոս ծնաւ 1491ին ի Սպանիա, Լոյոլայի գղեակը մեծափարթամ և ազնուական գերզատանէ : Հայրն է Պելգրամոյ, իշխան Օնեէզի և Լոյոլայ, մայրը Մարիա Սաէզ տը Լիգոնա՝ ոչ նուազ ազնուատոհմ ու բարեպաշտօն :

Ժամանակ մը մնաց Ֆէրաինան Ե.ի Թագաւորին արքունիքը՝ իբրև մանուկ պալատական, սիրուած և յարգուած ամենէն : Բայց բնութեամբ յոյժ եռանդուն ու քաջասիրտ, ուզեց իր եղբարց նման հետեւիլ զինուորական ասպարէզին, ուր անվեհեր արիութեան և վեհանձնութեան օրինակ մ'էր, յաւէտ վտանգներու զիմագրաւ և ներող իւր թշնամեաց :

Գանուելով Բամբլոնա քաղաքը, զոր պաշտրած էր Գաղղիոյ Թագաւորին Փրանկիսկոս Ա.ի բանակը, յորդորեց քաղաքացիներն աներկիւղ զիմադրելու : Բայց երկուստեք քաջ ու յամառօմէն կողքելէ վերջ, հարկ եղաւ՝ Սպանիացոց անձնատուր լինել, մանաւանդ որ Իգնատիոս վիրաւորուած էր աջ ոտքէն, ու այլեւս չէր կարող մասնակցիլ պատերազմին :

Նախնական խնամքներ չէին կրցած վէրքն ըստ պատշաճի դարմանել, ուստի հարկ եղաւ ենթարկուել երկրորդ գործողութեան մը : Ս. Պետրոս առաքեալ, ուրուն մասնաւոր ջերմեռանդութիւն ունէր, երեւցաւ ի-

րեն երազին մէջ գիշեր մը, երբ բուժման ամեն յոյս վերջացած ըլլալով, ընդունած էր Եկեղեցւոյ վերջին խորհուրդները և մահուան կը պատրաստուէր՝ համակերպեալ աստուածային կամաց։ Պետն Առաքելոց դրաւ ձեռքն անոր վրայ և բժշկեց զայն իսկոյն։ Բայց կազ չմնալու համար ինքն իսկ խնդրեց երբորդ գործողութիւն մ'ալ, որ ականկալեալ արդիւնքը չտուու, և որմէ յետոյ պէտք եղաւ բաւական ժամանակ մնալ անկողնոյ կամ սենեակին մէջ։ Զանձրոյթը փարատելու համար գիրք մը խնդրեց, նախասիրութիւն ցուցնելով Վէպի կամ աշխարհիկ պատմութեան։ Բայց իրեն արրուեցաւ Յիսուսի և Սուրբերու վարքը։

Յոռի ընթերցմունք հոգեսպան և բարոյասպան են. մաքուր ընթերցումներու միջոցաւ Հոգին Սուրբ կը պարգեւէ մեզ յաճախ իւր ներշնչումները. զգաց տակաւ առ տակաւ թէ իւր հոգին պէտք ունէր աւելի մօտենալու Աստուծոյ, սկսաւ լաւագոյն տեսնել աշխատասէր կեանքի մը վտանգները, փտռամոլութեան ընդունայնութիւնը, սնապարծ ու հեշտախնդիր ցանկութեանց պատրանքն ու ստութիւն, և առօրեայ և մեղսալից շահերու վեասներն յաւիտենական։ Ուզեց բոլորովին նոր կեանք մ'սկսիլ, հեռի մարմնաւոր խափուսիկ վայելքներէ, և անձնատուր քրիստոսասէր ապաշխարութեան և ամէն տեսակ մահացուցմանց։ Բայց ոտքին վէրքը տակաւին թոյլ չէր տար իրեն՝ ի գործ դնել իւր սրբատենչ ղիտաւորութիւնը։ Սկսաւ ընել գոնէ ինչ որ կարելի էր։ Ամեն գիշեր կ'ընդհատէր իւր քունը, և ժամերով ի ծունր գետնին վրայ, կ'աղօթէր ու դառնապէս կ'արտասուէր իւր մեղաց վրայ։

Գիշեր մը արտաքոյ կարգի ջերմեռանդութիւն զգալով, Յիսուսի նուիրեց ինքզինք Ս. Աստուածածնի

ձեռք, և անոնց խոստացաւ հաւատարմութիւն ան-
 վերապահ և մինչև ի մահ: Այն ատեն լսելի եղաւ ձայն
 մը բարձր և խորհրդաւոր, որմէ տունն իսկ զզրդեցաւ,
 և ներքին զգացում մը կ'ըսէր իրեն թէ իւր բոլորա-
 նուէր զոհարեցութիւնն ընդունուած էր երկինքէն:
 Այլեւս չէր ընթեռնուր հետաքրքրութեան համար սոսկ,
 այլ անկեղծ և բուռն իղձերով նմանելու Աստուածորդ-
 ւոյն և Սրբոց անձնաչարչար կենաց և վսեմ օրինակ-
 ներուն: Ի խրախոյս իւր բարի առաջագրութեանց երե-
 ւեցաւ իրեն լոյսերու մէջ Կոյսն Անարատ՝ Յիսուս մա-
 նուկը գիրկը: Զգուանք երկրաքարչ հաճոյից, ջնջումն
 պատկերներու մարմնաւոր հեշտութեանց, և եղեմային
 քաղցրութեան մը հեզումն իւր հոգւոյն մէջ, ահա՛
 սքանչելի արդիւնքներն սոյն տեսիլքին: Ազատեցաւ
 այնուհետև զգայարանաց ապստամբութենէն, ինչպէս
 և այն ամօթալի ստորնացուցիչ խորհուրդներէն, որոնք
 կուգան երբեմն կոփել ու շարչարիւլ ամենէն մաքրա-
 տենչ ու ողջախոհ հոգիներ իսկ:

Բ.

Հազիւ ապաքինած հիւանդութենէն, թողուց Լո-
 լուայի պալատը, ձի հեծնելով և բարեկրօմ զուքսի մը
 այցելութիւնը պատրուակելով, հեռացաւ քաղաքէն:
 Իւր ուղեւորութեան գլխաւոր նպատակն էր ուխտի
 երթալ ի Մոն-Սէրրա, — Պարչելոնայէն օրուան մը
 ճամբոյ, — ուր ամէն կողմէ կուգային պատուելու Տի-
 րամօր մի պատկերն հրաշագործ, որ ցարդ եւս չէ
 դադրած երբեք մեծ ջերմեռանդութեան առարկայ լի-
 նելէ ամբողջ Սպանիոյ մէջ: Իրեն ընկերացող երկու

ժառայները ետ զրկեց, Ս. Աստուածածնի առջև մըշտնջենաւ որ ողջախոհութիւն ուխտեց, ինքզինք ամէն գիշեր ձաղկել որոշեց, և մանաւանդ ամենայն ինչ «Ի մեծագոյն փառս Ասուծոյ» կատարել առաջադրեց, չուզելով ունենալ երբեք ո՛ր եւ է ուրիշ նպատակ իւր մտածութեանց, խօսից, բազմանոց և գործոց: «Ad majorem Dei gloriam»! այս պիտի լինի նաև նշանաբանն իւր ապագայ Միաբանութեան, և հոգիներ միլիոններով իւր օրինակէն ազդուած՝ պիտի աշխատին, գրեն, խօսին ու զոհուին այս երկնային փառասիրութեամբ ամեն կլիմաներու և ամեն աստղերու ներքև:

Հոգիներու ղեկավարութեան փորձառու և բարուց անբժութեամբ անուանի, Տէր Յովհաննէս Շանոն քահանայի ընդհանրական խոստովանանք եղաւ ամենայն ճշդութեամբ և խոնարհութեամբ, պարզեց անոր՝ առանձնացեալ և խստամբեր ապաշխարողի կեանք մը վարելու ծրագիրը, և խնդրեց լոյս և խորհուրդ Հոգեկիր խոստովանահայրն որ ինքն ես խստակրօն կենցաղավարութեան օրինակ մ'էր, քաջալերեց զայն իւր առաջադրութեան մէջ, բայց խոհեմութեան կանոններու մտադիր՝ զգուշացուց զայն որսգայթներէ, զորս սովոր է լարել բարւոյ թշնամին՝ նորագարձ մեղաւորները վտանգաւոր չափազանցութեանց մղելով:

Իգնատիոս հաստատապէս առաջադրած՝ հրաժարիլ աշխարհէ, իւր ձին նուիրեց վանքին, և իւր սուրը կախեց Աստուածածնի խորանին մօտ: Երեկոյին գաղտնաբար գնաց աղքատի մը տուաւ իւր փայլուն զգեստները, և խեղճ ուխտաւորի մը հագուստով դարձաւ եկեղեցի, ուր անցուց Ս. Աւետման տօնի զիշերն աղօթքով և արտասուօք: Հետեւեալ առաւօտ մեծ երկիւղածութեամբ Ս. Պատարագ տեսաւ և Հաղորդուե-

ցաւ : Շնորհակալութեան աղօթքէն վերջ, մեկնեցաւ և հասաւ Մանրէզի փոքր քաղաքը, Մոն-Սերրայէն երեք փարսախ հեռի, ուր կար Դոմինիկեանց վանք մը և հիւանդանոց մը ուխտաւորներու և աղքատներու համար : Բնակեցաւ հիւանդանոցին մէջ, ուր տառապեալներու խոնարհ և անձնանուէր ծառայութեան միացուց կամաւոր չարչարանքներ, մրցելով ամենէն խստակեաց ճգնաւորներու հետ, որոնք նշանաւոր եղած են անմարդաբնակ անապատներու մէջ : Ամեն հանդիստ ու ամենէն աւելի անմեղ սփոփանքն անգամ կը զլանար իւր մարմնոյն, զոր կ'ենթարկէր խոշտանգանաց աիւ և գիշեր, բաղձալով այդուհատուցում մ'ընել իւր երբեմնի պճնասէր և փափկասուն իշխանավայել կեանքին : Արտաքուստ արհամարհելի կերպարանք մ'ստացած էր, այնպէս որ երբ իւր ճգնարանէն դուրս կ'ելնէր քիչ մը հաց մուրալու, տղաք կը ծաղրէին և կը նախատէին զայն, ինչ որ հողեպէս հաճոյք կը պատճառէր իրեն, յիշելով Յիսուսի և Առաքելոց կրած նախատինքն ու արհամարհանքը : Իւր աղօթքը մշտատե էր, ու երբեք Ս. Պատարագէ չէր պակսեր, և Ամենասուրբ Հաղորդութեան այցելութիւն կ'ընէր ամեն անգամ որ կրնար :

Չարասէր բանասրկուն որ մանաւանդ հպարտութեամբ և մարմնապաշտ փափկութեամբ կ'ուզէ զահաւիտէ ընել զմեզ անչէջ բոցերուն մէջ, ամեն հնարք գործածեց վնասեցնելու համար զայն, գլխաւորապէս հիւանդանոցի աղտեղութիւնները անհանդուրժելիօրէն պոփալի ցուցնելով, և անոր մտքին մէջ ծայրայեղ ամօթ մը ծնուցանելով՝ մուրացիկներու աստիճանին իջած ըլլալուն համար : Բայց Իգնատիոս զխոցաւ թէ ուստի կուգար այդ փորձութիւնը, որուն լաւ եւս

յաղթելու մտօք, մեծագոյն մտերմութեամբ ու յարգա-
նօք պատուեց աղքատները և ինքզինք նուիրեց ամե-
նէն նողկալի հիւանդներու խնամոց :

Գ.

Սակայն աղմուկ մը կը շրջէր բերնէ բերան Ման-
րէզի մէջ թէ մուրիկ ուխտաւորն ազնուական ցեղէ
էր, և թէ իւր արգահատելի վիճակը վսեմ առաքինու-
թեան մը արդիւնքն էր եւեթ : Ընդհուպ ուրեմն ար-
համարհանքը փոխուեցաւ մեծարանքի և հիացման :
Իգնատիոս գոհ չեղաւ ասկէ, և հեռանալով քաղաքէն
ծածուկ բնակեցաւ քարայրի մը մէջ, ուր մարդկային
բնութեան սոսկում պատճառող մահացուցումներ ըրաւ,
նուազելու և հիւանդանալու սատիճան : Հարկ եղաւ
զայն հիւանդանոց փոխադրել, ուր մահը մօտալուտ
կ'երեւէր : Ճիզիքական ցաւոց վրայ հոգեկան տառա-
պոնք մ'ալ աւելցաւ, սնապարծ անձնագով ինքնահա-
ճութեան սաստիկ փորձութիւններ գալով վրդովել իւր
խզճի անդորրութիւնը : Երկնից օգնութեամբ յաղթեց՝
մտածելով անդրդուելի խոնարհութեամբ. « Ե՞նչ են իմ
ըրած բոլոր սպաշխարանքներս դժոխոց տանջանքնե-
րուն քով, որոց այնչափ անգամ արժանի եղայ իմ
անցեալ կեանքիս մեղքերով » Տակաւին թերարոյժ՝
սկսաւ նաև տանջուիլ խղճահարութեամբ. հակառակ
իւր ճշգրիտ և ընդհանրական խոստովանութեանց՝ կը
կարծէր թէ իւր հոգին զուրկ էր դեռ Աստուծոյ սըր-
բարար շնորհքէն : Հոգեւոր քաղցրութիւններն ու մը-
խիթարութիւնք զորս կը վայելէր մինչև այն ատեն՝
փոխուեցան յանկարծ անպատում դառնութեան : Բոլոր

լոյսերը շիջանելով հոգւոյն մէջ, տարակոյս և տագնապ, վրդովում և մթութիւն կը խուժէին ամեն կողմանէ :

Սղճահարութեան փորձութենէն ազատեցաւ՝ հնազաղելով յօժարամիտ իւր խոստովանանք բոլոր խորասաներուն : Սաղաղութեան ջինջ արեւը ծագեցաւ վերստին իւր հոգւոյն, և վիշտ ու երկիւղ փոխուեցան երկնարուխ հրճուանաց : Իւր անձին փորձութեամբ ստացաւ շնորհքն ճանաչողութեան հոգւոց, և երբ օր մը պիտի լինի քննյ. Բարձրելոյն՝ յոյժ ազդեցիկ հեղինակութեամբ պիտի կրնայ պարգեւել անգօրրութիւն ալիճուի փոթորկայոյց խիղճերու :

Աստուածային գթութիւնն արժանի բրաւ գայն ոչ սակաւ երկնային տեսիլքներու և այցելութեանց : Անգամ մը աննիւթական պատկերի մը մէջ տեսաւ մտօք խորհուրդն երկրպագելի Երրորդութեան : Ուրիշ անգամներ յայտնուեցան իրեն Անհուն Իմաստութեան դիտումն արարչագործութեան մէջ, Քրիստոսի Մարմնոյ և Արեան ստուգութիւնը Ս. Հաղորդութեան մէջ, և ուրիշ ճշմարտութիւններ, որոց մասին մի օր պիտի համարձակի ըսել. «Եթէ Աւետարանի մէջ ալ գրուած չըլլային, պիտի հաւատայի անյողգողդ և պատրաստ արիւնս թափելու, զօրութեամբ այն գերբնական լոյսներուն՝ որոնք երկինքէն կուգային ինձ Մանրէզի մէջ : » Յափշտակութիւն մը որ տեւեց ութ օր՝ իւր կենաց ամենէն թանկագին շնորհներէն մին եղաւ. բայց հակառակ ամեն թախանձանաց՝ չուզեց երբեք յայտնել այն ծանօթութիւնները զորս ստացաւ այդ միջոցին : Երկնից կամքն էր անշուշտ որ անոնք գաղտնի մնային : Թէև տակաւին պարզ ճգնաւոր և ապաշխարող մ'էր միայն, բայց աստուածային սիրով բոցավառ՝ խրա-

տաքանութիւններ կ'ընէր առանին կամ հրապարակաւ, ու շատեր դարձի կուգային, կը հրաժարէին երկրաւոր հաճոյքներէ և պատիւներէ, նուիրուելով Աստուծոյ սուրբ ծառայութեան: Բայց հրաշքներու ամենէն քարեյորդորն ու ամենէն տեւականը, որմէ կ'օգտուի Քրիստոնէութիւնն ամբողջ, եղաւ Հոգեւոր Կրթութեանց գիրքը՝ զոր շարագրեց երկնային ազդեցութեամբ Մանրէզի քարայրին մէջ, տակաւին զուրկ ամին աստուածաբանական ուսումէ, լոկ գրելու կարգալ գիտնալով: Այն սակեղինիկ մատեանն է այս, որոյ մասին հիացմամբ խօսած են քահանայապետք, սուրբեր և աստուածատրաններ, և որուն համար թուած է թէ «Աւելի հոգիներ դարձի բերաւ քան որչափ գիր կը պարունակէ:» Արդարեւ սքանչելի մեթոտ մ'է այն թէ՛ մեղաց ճամբէն հեռանալու և թէ՛ կատարելութեան մէջ յառաջդիմելու(*):

(*) Մին այն բարձրաստիճան եկեղեցականներէն զորս ամենէն աւելի յարգանաց արժանի կը համարինք, է Վեհաշնորհ Մելքիսեդեկ Մուրատեանցն անշուշտ, (հակառակ Մաղաքիա Օրմանեանի զրպարտութեանց): Ուստի ցաւօք եւ զարմացմամբ տեսանք իւր «Քրիստոնէական եկեղեցւոյ պատմութեան մէջ» հետագայ խօսքերը. «Յիսուսեանց գաղտնիքները կը գտնուին Հոգեւոր Կրթութեանց գիրքին մէջ»: Նախ Յիսուսեանք, — ինչպէս ամեն բարեգործ հաստատութիւն —, չունին ո՛ր եւ է գաղտնիք, եւ յետոյ բառ մ'իսկ չկայ հոն Յիսուսեանց մասին, որո՞ք դեռ գոյութիւն իսկ չունէին, զիրքը շարագրուած ըլլալով Միաբանութեան հիմնադրութենէն տասնեակ տարիներ առաջ Հոս Ըսենք անցողակի թէ բողոքական լուրջ հեղինակներ անգամ գովեստով խօսած են այդ հրաշալի մատեանի մասին:

Գրեթէ տարի մը Մանրէզի մէջ ֆնալէ վերջ, մեկ-
նեցաւ ի Հոռոմ, ուր հասաւ 1523 տարուոյ Մաղկազար-
զի կիւրակէն: Միշտ Երոէսազէմ երթալու գիտաւորու-
թեամբ՝ եկաւ ի վենետիկ, ուր շարունակեց իւր աղ-
քատ կեանքը, գիշերներն անցընելով Ս. Մարկոսի հը-
րապարակին վրայ: Գիշեր մը ազնուական և հոգեսէր
ծերակուտական մը Մարկոս Անտոն Գրէվիզան լսեց
ձայն մը որ կ'ըսէր իրեն. «Ի՞նչ կը հանգչիս ոսկեձե-
ղուն սենեկի մը և փափուկ անկողնոյ մէջ, իսկ իմ
ծառայս հրապարակն է անզգեստ, անսնունդ, առանց
անկողնոյ, և լքուած ամենէն:» Այս ձայնէն ազդուած,
դուրս ելաւ բարեսիրտ հարուստը, և գտնելով տուն
բերաւ զայն, և ջանաց հանգիստ ու դիրութիւն մա-
տուցանել՝ որչափ որ կարելի եղաւ ընդունել տալ խո-
նարճ ուխտաւորին:

Դ.

Յուլիս 14ին մեկնեցաւ դէպ ի Կիպրոս, և անկէ
Պաղեստին: Ետֆայէն հասաւ հինգ օրէն Երուսաղէմ
սեպտ. ամսոյ 4ին: Լացաւ զղջումով և ուրախութեամբ
ի տես սբ. Բաղաքին, ուր իւր Փրկիչը չարչարուած
ու մեռած էր իրեն համար: Խնչ խանդավառ սիրա-
բորբոք հաւատքով և ջերմեռանդութեամբ այցելեց
տնօրինական տեղերն ու սրբավայրերը, կրնանք երե-
ւակայել ճանչնալով իւր գերազանցօրէն կրօնասէր
երկնամերձ հոգին: Իւր գիտաւորութիւնն էր ֆնալ հոռոմ
և աշխատիլ Արեւելեան ժողովրդոց դարձին: Բայց ի-
մանալով թէ այս չէ Աստուծոյ կամքն իրեն համար,
հնազանդեցաւ, և ձմեռ ժամանակ ճամբայ ելաւ, բո-
կոտն և ցնցոտիներ հագած:

Նախ եկաւ ի վեհնեօրիկ, և մինչ անտի կ'ուզեաւ
 րէր ի ձեռնովա, Սպանիացիք չճանչնալով զայն, իրրե-
 լրտես նկատեցին, և յետոյ իրրե յիմար, և անգթօրէն
 ծեծեցին զայն: Վերջապէս աստուածային պաշտպա-
 նութեամբ դարձաւ ի Պարչելոնա, ուրկէ սկսած էր իր
 ուղեւորութիւնը: Արդէն երեսուն երեք տարեկան ե-
 ղած էր, և զեռ կանոնաւոր ուսմունք չէր ըրած: Մը-
 տածելով թէ առանց գրական ու սրբազան գիտու-
 թեանց կարելի պիտի չըլլար օգտակարապէս ծառայել
 հօգուոց, որոչեց տալ ինքզինք եռանդալից ջանիւք կա-
 րելոր ուսմանց: Ամենէն նախնական դասաւանդու-
 թիւնն ըրաւ իրեն բարի անձնաւորութիւն մը որ ու-
 սուցիչ էր քերականութեան յիշեալ քաղաքը: Իզնու-
 ախոս իւր գասերուն պարապելով հանդերձ՝ չէր կըը-
 նար անտարբեր աչօք դիտել շարիքն ու գայթաղու-
 թիւն. ուստի իմանալով թէ ստահակք սմանք յոյժ
 համարձակ Հրեօսակաց վանքը կ'այցելին, գնաց առաք-
 եալի մը համարձակութեամբ յանդիմանեց մենաստա-
 նին կօյսերն, որոնք հասկնալով հուսկ ուրեմն թէ
 այդ անխոհեմ երիտասարդաց յաճախակի այցելու-
 թիւնք կրնային մի օր ծանրապէս վտանգաւոր ըլլալ,
 իրենց խօսարանին դռները փակեցին անոնց առջև:
 Ինչ որ մեծ զայրոյթ պատճառեց անոնց, որք երկու
 մաւրիտանացի գերիներ գրգռեցին և սաստիկ ծեծել
 տուին իրենց հօգուոյն ու պատուոյն վեհանձն բարեկա-
 մը, որ ո՛չ մի գժգոհութիւն կամ արտունջ յայտնեց,
 այլ մանաւանդ օրհնեց զԱստուած, յիշելով առաքելոց
 գեղեցիկ օրինակը. «Եւ կոչեցեալ զԱռաքեալսն՝ զան
 հարին, եւ պատուիրեցին՝ մի՛ եւս խօսել յանուն Յի-
 սուսի...: Եւ նոքա զնացին խնդալով յերեսաց ասեցին,
 զի վասն անուանն Յիսուսի արժանի եղեն անարգե-
 լոյ:» (Գործք. Ե. 40 - 41.)

Ուրիշ կարեւոր դէպք մ'ալ. մարդ մը ինքզինք կախած էր, սուրբ աղօթեց անոր համար, որ վերակենդանացաւ, խոստովանահայր մը խնդրեց, անկեղծ ապաշխարութեան և զղջումի նշաններ տուաւ, և յետոյ մեռաւ իբրև բարի քրիստոնեայ :

Նախնական ուսմունքէ վերջ գնաց Ալգալայի համալսարանը՝ կանոնաւոր դասընթացքի հետեւելու համար : Բայց իւր սիրելագոյն զբաղումն չէր մոռնար երբեք. պարագոյ ժամերը կը գործածէր աղայոց և տգէտներու քրիստոնէական վարդապետութիւն սորվեցնելու, և չքաւորներու կ'օգնէր անոնց համար սղորմութիւն ժողվելով : Աղօթիւք, օրինակաւ և խրատներով բարեկարգեց քաղաքին երիտասարդութիւնը, նոյն իսկ սայթաքած կղերականներ բերաւ վերստին ի պարտաճանաչութիւն և ի բարեպաշտութիւն : Բայց այսչափ բարիք կրնա՞ր իրագործուիլ առանց խաչի, նըշան անվրէպ նախասահմանեալ հոգւոց : Շուտով սկըսաւ հալածանքը. կ'ամբաստանէին զայն իբրև ներմուծիչ նորութեանց, ժողորամիտ և շարափառ : Ընդդիմութիւնն այն աստիճան զօրացաւ որ զայն բանտ նետեցին, ուր մնաց քառասուն երկու օր. վսեմ զոհ քրիստոնէական անձնանուիրութեան : Անպարտ արձակուեցաւ միայն երբ հրապարակային վկայութիւն տրուեցաւ իւր անմեղութեան, բարուց մաքրութեան և ողջամիտ վարդապետութեան. վկայութիւն որ հաստատուեցաւ նաև Դոլեստոյի արքեպիսկոպոսին կողմանէ : Այս իմաստուն առաջնորդը խորհուրդ տուաւ իրեն երթալ ամբողջացնել իւր ուսմունքը ի Սալամանգա, որոյ համալսարանը աշխարհի ամենէն նշանաւորներէն մին էր : Մէկ քանի ընկերներով գնաց հոն, ուր միեւնոյն գեղեցիկ պտուղներն յառաջ բերաւ,

բազմաթիւ հոգիներ շահելով առ Աստուած : Միեւնոյն հալածանքներն ալ կրեց , մատնուելով զրպարտութեանց , թշնամանքի և շղթաներու : Բայց երկինք այս պատերազմէն եւս յաղթական դուրս հանեց զայն , և դատաւորք իսկ՝ հակառակ իրենց ատելութեան և կրից ստիպուեցան անստերիւր յայտարարել իւր հաւատքը , և զմայլիլ անոր խոնարհութեան և բոլոր դիւցազնական առաքիչութեանց վրայ :

Ե.

1528ին կը գտնենք զայն ի Բարիզ , ուր փելիսոփայութեան կը հետեւէր Սէնդ-Պարպ վարժարանը . յետին աստիճան ազքատ՝ մերթ կը մուրար և մերթ Ս. Յակոբայ հիւանդանոցը կ'երթար ճաշելու : Հոս ալ բարւոյ թշնամին չուշացաւ իրեն դէմ հալածանք հանելու , որովհետեւ մէկ քանի դպրոցականներ հեռացուցած էր մոլութենէ , և մօտեցուցած ազօթքի , սուրբ խորհրդոց և բարի գործքերու : Փայլուն կերպով աւարտեց Ս. Պարպի շրջանը , և Ս. Թովմասու գպրոցը սկսաւ աստուածարանութիւն , ամեն ճշմարիտ քահանայի անհրաժեշտ գիտութիւնը :

Ու այժմ հասած էր Նախախնամութեան ժամը պարգեւելու Եկեղեցւոյ և մարդկութեան պանծալի և անզուգական Միաբանութիւն մը , որ սահմանուած էր ծնուցանելու՝ իրմէ առաջ և իրմէ վերջ ո՛չ երբեք տեսնուած աստիճանով՝ սէր ու մեծարանք , ատելութիւն և անարգանք աշխարհի հինգ մասանց մէջ : Աստուածորդոյն երկրպագելի անուան նուիրեալ տիեզերահռչակ Ուխտն է այն , ԲՆԿԵՐՈՒՔԻՆ

Յիսուսի, անձէն վեհաշուք, զոր չեն կրնար արտա-
սանել մարգիկ առանց սիրոյ կամ առանց ատելու-
թեան. անձէն, որոյ վրայ կը գուրգուրան հրեշտակ-
ներն երկնից մէջ, և որմէ կը սարսին դողահար բոլոր
դեւերը դժոխոց...:

Աստուծոյ դործերը կը սկսին առանց ժխտի և
անշտինդ, խոնարհութեամբ ու համեստօրէն: Վեց պար-
կեշտ և ուշիմ երիտասարդներ միացան Սպանիացի ու-
սանողին, համախորհուրդ ու համաշունչ աշխատելու
համար: Առաջինն է Սալուացի քահանայ մը, Երա-
նելին Պետրոս Լըֆէվրը, միւսները դեռ ո՛չ քահանայ,
և ամենքն ալ Սպանիոյ զաւակ, Փրանկիսկոս Քաս-
վէր, Յակոբոս Լայնէց, Ալփոնսոս Սալմերոն, Նիկո-
զայոս Պոպատիւա, Սիմոն Ռոտրիկվէց, ամէնքն ալ
կոչուած հռչակաւոր լինելու մի օր գիտութեամբ, սըր-
բասէր վարուք, մեծամեծ ծառայութիւններով՝ զոր
պիտի մատուցանեն Եկեղեցւոյ: 1534 օգոստոս 15ին,
Տիրամօր Վերափոխման տօնին, Մոն. Մարգրի տաճա-
րին մէջ ի Բարիզ, ուխտեցին նուիրուիլ Աստուծոյ
փառաց և հոգիներու իրկութեան, պատրաստ երթա-
լու հոն, ուր որ հրամայէր Հայրապետն Հոովմայ, Յի-
սուսի Քրիստոսի Փօխանորդն յերկրի: Մինչ ընկերները
կը մնային Ֆրանսայի մայրաքաղաքը շարունակելու
իրենց ուսումներն, Իգնատիոսի հարկ եղաւ մեկնիլ
ի Սպանիա ինչ ինչ գործերու կարգադրութեան համար:
Հազիւ մօտեցած էր Լոյոլայի դղեկին, կղեր և ժողո-
վուրդ բազմութեամբ ընդ առաջ եկան, և հակառակ
իւր եղբարց և եղբորորդւոց թախանձանաց՝ նախընտ-
րեց օթեւանիլ Սրբուհւոյն Մազգաղենացւոյ հիւան-
դանոցը: Իւր իշխանաշուք գերգաստանէն զրկուեցաւ
Իսկոյն փափուկ անկողին, և ամէն օր իրեն համար կը

պատրաստուէին ամենէն կազգութիչ և հեշտալի համադամք: Սուրբը զհտնախշախ էր արգէն, իւր հացն ալ կ'ընդունէր մուրալով. ուստի և ախորժանամ կերակուրները վայելողները ազքատներն էին. ինչ որ կրկին հաճոյք էր Երանելոյն համար: Հոս եւս ինչպէս այլուր իւր քաղցր և սիրելագոյն զբաղումն էր՝ ազօթք ու քրիստոնէական առողջ սկզբունքներ սորվեցնել տղայոց և հասարակ ժողովրդեան: Իւր փրկաւէտ յորդորներով շինութիւն և մխիթարութիւն կը պարգեւէր ամենուն, այն աստիճան որ գունդագունդ կը դիմէին զինքը լսելու, և աղօթատեղիներն անբաւական լինելով, կը ստիպուէր յաճախ քարոզել բացօթեայ:

Կարելի չէ թուել բարիքը զոր գործեց իւր օրինակաւ և յորդորներով. կ'ըսէր թէ ծննդավայրը դարձած էր իւր երբեմն տուած գայթազութիւնները դարձմանելու համար: Գերազանցօրէն նրբախիզ՝ իւր երկու ագարակները նուիրեց խեղճ ընտատիքի մը, որուն չնչին վնաս մը պատճառած էր ի մանկութեան ուրիշ հասակակից ընկերներու հետ, քիչ մը պտուղ գողնալով: Պերճանքի և անհամեստութեան դէմ խօսած խրատարանութենէն վերջ, ամեն ոք ջանաց ուղղել ինքզինք: Եւ խաղամոլութեան դէմ խօսած օրն իսկ խաղի բոլոր սիրահարները գետը նետեցին իրենց թուղթերն ու քուեայները: Ջնջեց ստերգումն և հայհոյութիւն, առ Աստուած զարձուց մեղաւոր կիներ, թեթեւամիտ ու զօրղասիրիկ կղերականաց ներչնչեց սէր ծանրաբարոյ և մաքրակրօն վարուց: Իւր հարստութիւնը գործածեց հանրօգուտ ու բարեպաշտական ձեռնարկներու: Հաստատեց կամ վերահաստատեց Հրեշտակ Տեառն ըսելու սովորութիւնն, ի միջօրէի մեղաւորաց դարձին համար, և երեկոյին ի հանգիստ ննջեցեալ հսգւոց:

Վերջապէս երեք ամսուան մէջ աւելի բարիք ը-
րաւ քան ո՛ր և է քարոզիչ չկարենար ընել՝ զուցէ երեք
տարուան մէջ: Այնչափ տարածուած էր իւր սրբու-
թեան համբաւը՝ որ շատ տեղերէ կուղային տեսնելու
զայն, և երջանկութիւն կը համարէին կարենալ համ-
բուրել իւր ձեռքը կամ քղանցքը: Մէկէ աւելի հրաշք-
ներ ալ գործեց, ի մէջ այլոց ազատեց դիւահար մը,
և բուժեց ուրիշ թշուառ մը որ լուսնոտութենէ կը
տառապէր:

2.

Երբ գործերը վերջացնելով՝ դարձաւ ի վեներտիկ,
ուրախութեամբ լսեց թէ նոր գործակիցներ, Կլաւդիոս
Լը Փէ, Յովհաննէս Գսախը և Բասգիէ Պրուէ, երեքն
ալ Ֆրանսացի, միացած էին իւր առաջին ընկերնե-
րուն ի Բարիզ՝ որոնց թիւն այսպէսով կը հասնէր
տասնի: Այս նորեկներն ալ ինքզինքնին պարտաւորե-
ցին ուխտերով Մոն-Մարգրի եկեղեցոյն մէջ, և ա-
մենքն ալ միասին մեկնեցան 1536 Սրբուհոյն Գերա-
րուդայի տօնին, — 15 նոյեմբեր, իրենց բարի Հիմնադ-
րին քով գտնուելու համար: Զանոնք Հոռոմ զրկեց
Գերագոյն Քահանայապետին օրհնութիւնը խնդրելու,
և երբ վերադարձան, բաց ի երեքէն, որ արդէն քհնյ-
էին, եօթն ալ քհնյ. ձեռնադրուեցան՝ ի մեծ ուրա-
խութիւն ամենուն: Բայց Իգնատիոս առ խոնարհու-
թեան տարի մը վերջ միայն սկսաւ Ս. Պատարագ մա-
տուցանել, վերջին քասասուն օրերն ալ մենութեան
մէջ, ծոմապահութեամբ, հսկուով և մշտապէս աղօ-
թիւք անցընելով:

Թէ ի՛նչպիսի ջերմեանդն հաւասարով, երկնատեննչ
 ըզձիւք, արտասուելից հառաչմամբ կը բարձրանար
 ամեն առաւօտ ի սեղան Տեառն ամենակալի, ո՞վ կըր-
 նայ բացատրել: Ի՛նչ գորովալիբ սիրով, որդիական
 անկզբ վստահութեամբ ինքզինք հանապաղ կը դնէր
 առ ոտս Անարատ Կուսին Տիրամօր՝ խնդրելով որ հա-
 ճի մատուցանել զայն մայրենի արարչընկալ ձեռքերով
 իւր Աստուծոյ և Որդւոյն:

...Ամենքն ալ կը բազձային երթալ Ս. Երկիր, և
 հոն աշխատիլ հողիներու փրկութեան: Քայց վենետկոյ
 Հանրապետութիւնը Արեւելքի հետ պատերազմի մէջ
 ըլլալով, առ այժմ անկարելի էր այդ ըզձին իրագոր-
 ծումը: Ուստի ամենքն ալ սկսան աշխատիլ Իտալիոյ
 մէջ ուր պատենութիւն չէր պակսեր բարիք գործելու:

Երբ օր մը Իգնատիոս Սիենայէն Հռոմ կ'երթար
 խնդրելու Ս. Պապէն նորակազմ Միաբանութեան հաս-
 տատութիւնը, կիսաւեր մատուռ մը մտաւ աղօթելու .
 և հոն է որ տեղի ունեցաւ նշանաւոր յայտնութիւն
 մը: Տեսաւ զՀայրն Յաւիտենական որ զայն կը մա-
 տուցանէր իր որդւոյն, որ խաչաբարձ երեւելով կ'ը-
 սէր սուրբ Հիմնադրին. «Նպաստաւոր պիտի լինիմ քեզ
 ի Հռոմ:» Ի՛նչ սքանչելի խորհրդանշան, որոյ ճշմար-
 տութիւնը կը փայլի պայծառօրէն յընթացս դարուց-
 իցա՛յ և Աստուած ընթերակայ յաւէտ Յիսուսեանց:
 Այս ուխտին ճակատադիրն անբաժան է Եկեղեցւոյ ճա-
 կատագրէն, ամենուրեք ուր հալածանք մը կը սկսի
 ընդդէմ Եկեղեցւոյ, առաջին զոհերն իրենք են: ուր որ
 Եկեղեցին դուրս կ'ելնէ մոլեգնաչունչ փոթորիկներէ՝
 յաղթապանծ ու վեհաշուք, անոնք եւս կը կանգնին
 գերափառ ու անկոր ան:

Քահանայապետը Հռոմէն բացակայ ըլլալով, Իգ-

նատիոս գործածեց իւր ժամանակը Միաբանութեան
կանոնները գրելու, իւր ընկերաց և մանաւանդ Հոգ-
ւոյն Սրբոյ օգնութեամբ:

Հոս նենգամիտ աղանդաւոր մը նոր պայքար մը
սկսաւ անոր դէմ. բայց ճշմարտութիւն և անմեղու-
թիւն չեղան ռանակոխ. անոնց անմխտելի արժանիքը
վայելեցաւ չքեղօրէն, և սրբազան Հօ. հրամանով ա-
զատութիւն շնորհուեցաւ հանդերձ քովեստիւք՝ քա-
րօզելու ամենուրեք: Վշտակիրներու օգտակար լինելու
առիթն ալ չուշացաւ: Արտաքոյ կարգի սղութիւն մը
հանրային ազէտք եղած էր Յախտենական Վազարին.
ամեն տեղ տագնապ ու նեղութիւն: Նոր կրօնաւորք
գործքով ապացուցին իրենց մարդասէր հոգին՝ կատար-
եալ անշահախնդրութեամբ և անձնուրացութեամբ
փութալով յօգնութիւն ամենուն: Միակ գրամագլուխ
ուհննալով իրենց անսահման վստահութիւնն աստուա-
ծային Նախախնամութեան և Հրեշտակաց Թագուհւոյն,
կրցան հայթայթել ապրուստ, զգեստեղէն, զիւ ու գը-
բամ կարօտելոց, որոնց թիւը կը հասնէր մինչև չորս
հարիւրի: Սոյն օրինակը պերճախօս և ազգու քարոզ
մեղաւ հարուստներուն, որոնք անխաիր բոլոր թըշ-
ուառներու օգնել փութացին առատաձեռն կերպով:
Եւ որովհետև կրօնաւորներու խնամոց առաջին առար-
կայ պէտք է լինին հոգիները, տիւ և զիշեր յօգնեցան
անխոնջ՝ գերբնական բարիքներն աւելցնելու: Շատեր
կ'ըսէին թէ մարմնոյ սովը հոգւոյ առատութիւն բերած
էր, զի այդ նոր Առաքեալներու շնորհիւ սկսած էին
ազօթել աւելի կանոնաւորութեամբ, վայելչապէս մեր-
ձենալ խորհրդոց խոստովանութեան և Ս. Հաղորդու-
թեան, վայելել Ամենասուրբ Պատարագի անսպառ ու
կենսապարգև հարստութիւնները, և աստուածային
կամաց համակերպութեամբ արգիւնաւոր ընել իրենց
զրկումներն ու տառապանք:

է.

Պօզոս Գ. ուզելով հաստատել նոր Միաբանութիւնը, երեք ծիրաււորներէ խնդրեց զբաղիլ այդ խընդրով: Բայց ի սկզբան բոլորովին հակառակ կործիք յայտնեցին անոնք. ըսելով թէ փոխանակ նոր կրօնաւորութիւններ հիմնելու, լաւագոյն պիտի ըլլար հիները բարեկարգել, մանաւանդ որ Իննովկենարոս Գ. լատերանու, և Գրիգոր Ժ. Լիոնի տիեզերական ժողովներու մէջ այսպէս կը խորհէին...: Բայց Յիսուս որ խոստացած էր օգնել ի Հոռոմ, ընդհուպ այնպէս փոխեց սրտերը. որ ամենքն ալ հաւանեցան և Ս. Պապը Սահմանադրութիւնները կարգալէ վերջ յայտարարեց ուրախութեամբ. «*Vasni ususque est usus*»:

27 Սեպտ. 1540, պատմական անմոռանալի թրուական մ'է. այն օրն է որ Յիսուսի Բնկերութիւնը պաշտօնապէս հաստատուեցաւ Եկեղեցւոյ գերագոյն իշխանութեան:

Հիմա կրօնաւորաց առաջին պարտականութիւններ ընտրել ըստ Սահմանադրութեան ընդհանրական Մեծաւոր մը, որոյ պաշտօնը պիտի լինէր ցկեանս: Ընտրուեցաւ Իգնատիոս որ սակայն մերժեց ընդունիլ տեսակ տեսակ առարկութիւններ յարուցանելով: Հարկ եղաւ երկրորդ ընտրութեան մը ձեռնարկել. չորս օր ազօթելէ վերջ: Նոյն արդիւնք քուէից, և նոր ընդդիմութիւն ընտրելոյն: Պէտք եղաւ որ գիտուն աստուածաբան մը Փրանկիսկեանց կարգէն, իւր երբեմնի խոստովանահայրը, գար և իրեն յայտնէր թէ չէ՞ կրնար այլեւս շարունակել իւր մերժումն՝ առանց զիմադրելու Աստուծոյ կամաց: Համոզուելով թէ ո՛չ եւս առաքի-

նութիւն պիտի լինէր պնդել, համակերպեցաւ խոնարհութեամբ:

Իւր առաջին գործը եղաւ տղայոց Քրիստոնեական սորվեցնել քառասուն օր «Ասուածամօր ճանապարհ»ի մատրան մէջ: (*) Աստի ծագումն առած է այն սովորութիւնն, որով ամեն ընդհ. Մեծաւոր իւր պաշտօնը կը սկսի այսպիսի շինիչ և խոնարհամիտ դասուանդութեամբ:

Յիսուսեանք հեռզհետէ շատցած էին, և ոմանք մեկնած՝ հեռաւոր տեղեր կարեւոր պաշտօններով: Փրանկիսկոս Քսապիւր, նա որ պիտի լինէր նոր մամանակաց մեծ Առաքեալը՝ թիւրաւոր հեթանոսներ բե-

(*) Այսօր Յիսուսի անուան նուիրեալ եկեղեցին է այն, Հր-
առմի ամենէն նշանաւոր, ամենէն գեղեցիկ եւ մեծածոխ տա-
ճարներէն մին, հրաշալիք գեղարուեստի, բարեգարգութեան
եւ բարեպաշտութեան երբեակ տեսակէտով: Հոս կը գտնուին
յոզնաթիւ շքեղ նկարներ, բոլոր Յիսուսեան սուրբերու եւ մար-
տիրոսներու մասունքը, եւ իրենց Հիմնադրին հոյակապ հրաշա-
րուեստ խորանը, որոյ վրայ վեհօրէն կը բարձրանայ անոր ար-
ծաթեայ եւ մեծագին քարերով զարդարուն, հրաշալիօրէն տը-
պաւորիչ արձանը բնական մեծութեամբ, աչքերն յառած դէպի
երկինք: Գեղեցկին ճաշակն ի սպառ մարած ըլլալու է մարդու
մը մէջ, որ տեսնէ զայն եւ չյուզուի: Նոյն խորանին մօտ կը
գտնուի մտամոլոփ աղօթքի եւ ջերմեռանդութեան հրաւիրող
փոքր մատուռ մը, ուր դրուած է Տիրամօր հրաշագործ պատ-
կերը՝ նկարուած այնչափ կենդանի եւ սրտագրաւ, որ գոզցես
պիտի բանայ բերանը քաղցրութեան եւ մարդասիրութեան, զը-
թոյ եւ մխիթարութեան բառեր արտասանելու համար: Անհնար
է չյուզուիլ, չսիրել, չլուսալ, չուզել լաւագոյն լինել այդ սուրբ
պատկերին առջեւ, որ կը կոչուի «Madonna della Strada, Աս-
ուածամայր ճանապարհ»ի: Արդարեւ «Հրեշտակն ի մարդկանէ,
Արարչընկալ Տիրուհին» չէ՞ որ ցոյց կուտայ ուղեկորոյս մարդ-
կութեան նախ ճանապարհն պարտուց եւ առաքինութեան եւ
հուսկ ուրեմն երկնային թագաւորութեան:

րելով ի լրջս Աւետարանի, գաղած էր՝ անթիւ վը-
տանգներէ անցնելով՝ մինչև ի Ճարոն և Հնդկաստան :
Եւ ամենուն վրայ կը հսկէր ժօտէն և հետուէն մշտաբ-
թուն աչքը Մեծաւորին : Երբեք եկեղեցական վարչու-
թիւն մը եզած չէ ո՛չ աւելի կորովի և ոչ աւելի քաղցր :
Ազատութեան և իշխանութեան ամենափոփոկ հարցը
լուծած էրնա երկնային իմաստութեամբ : Ո՛չ ընդ-
հանրութեան բարիքը կը զոհէր անհատներու ճաշա-
կին , և ո՛չ անհատին բարիքն ընդհանրութեան օգ-
տին : Գիտէր քաջալերել առանց փթացնելու , սանձել
առանց խորտակելու , գիտէր ուղղել առանց զայրացը-
նելու , յանդիմանել առանց վէրքեր բանալու , պատժել
առանց բարոյապէս սպաննելու : Ստորակարգեալներէ
պահանջեալ կատարելութիւնները նախ ինք կը դնէր
ի գործ գերագոյն աստիճանով : Ո՛րչափ հեռի էր նա
անոնցմէ , որոնք մեծաւոր կ'ըլլան կարծես իրենց
ուսերը թեթեւցնելու և այլոց ուսերը ծանրաբեռնելու
համար : Շատ զգոյշ էր գիւցտգնութիւն պահանջելէ ,
բայց այնչափ կարեկցութիւն , շնորհ , ազնուութիւն ,
բարեկրթութիւն կար իւր խօսքերուն մէջ , որ սէրը
կը հոսէր ամեն կողմերէ , և դժուարինները զիւրին
կ'ընէր , զառնութիւնները քաղցրութեան կը փոխէր :
Սոյն երջանիկ ոգին կը տիրէ ցայսօր Յիսուսի Ընկե-
րութեան մէջ , ուր հնազանդիլ պարսականութիւն մը
չէ եւեթ , այլ նաև հաճոյք մ'իսկ , կամ Պոսիւէի բա-
ռերով , « ուր ամեն ոք կը հնազանդի , եւ ո՛չ ոք կը հր-
բամայի » . անոր համար անշուշտ որ հրամայողը կա-
նոնն է ; և ո՛չ քմահաճոյքը , և Մեծաւորք գիտեն
« Զսկարուքիւն սկարացն բառնալ » , ըստգթալիւր ազդա-
բարութեան Սրբոյն Պօղոսի (Հո. ովմ. Ժ. 6 . 1 .) :

Իւր պաշտօնին պատասխանատուութեան եզակա-
նօրէն գիտակից, վայրկեան մը իսկ չէր կորսնցնէր՝
իւր հանգիստն ու զրօսանք կը գտնէր աշխատութեան
և յոգնութեանց մէջ. կը զգուշանար՝ աւելորդ այցելու-
թիւններէ: Միայն երկու անգամ Հոռմէն դուրս ելաւ,
մին՝ Սանդ-Անճելոյի ժողովուրդը Դիվոլիի բնակիչնե-
րուն հետ հաշտեցնելու համար, և միւսը Գոլոննա
գուքսին ընտանեկան մի գժտութիւնը քրիստոնէական
սիրով վերջացնելու: Ուրիշ յոյժ կարեւոր հաշտու-
թեանց եւս աշխատեցաւ ոչ նուազ յաջողութեամբ:
Երկինք՝ որոյ ձեռքին մէջ գործիք մ'էր ճկուն՝ յայտ-
նապէս կ'օգնէր իրեն յամենայնի, Հակոբակ յոռետես
գուշակութեանց կրցաւ հաշտեցնել նաև Յովհաննէս
Գ. Բորդուկալի թագաւորը Պօղոս Գ. ի և տը Սիլվա
կարտինալին հետ, որ Վիզիէոյի եպիսկոպոսն էր:

Անհաշուելի են բարիքները զոր գործեց Հոռմի
մէջ, ուր հիմնեց մասնաւոր տուն մը նորադարձ Հրէից
համար, որոնք յաճախ քրիստոնէութիւնը կ'ընդունէին
իւր խնամքով և քարոզութեամբ: Սրբուհի Մ. Մագ-
դաղինացւոյն վանքը հիմնեց այն կիներու համար, ո-
րոնք կ'ուզէին իրենց ապաշխարողի կեանքն անցնել
վանական կանոններու տակ: Իսկ անոնց՝ որոց փա-
փազը մինչև հոս չէր բարձրանար՝ ուրիշ հաստատու-
թիւն մը պէտք էր, և զայն եւս յաջողեցաւ պատրաս-
տել և դրաւ Սրբուհւոյն Մարթայի պաշտպանութեան
ներքեւ: Հոն կը ժողվէր զլջացեալ կիներն, անոնց հո-
գեւոր և մարմնաւոր պիտոյից հոգ տանելով: Կ'ըսէին
ոմանք. «Ասոնց դարձը չի տեւեր». իսկ նա կուտար
այս զեղեցիկ պատասխանը, որ այնչափ բարեգործներ

է միսիթարած չորս դարէ ի վեր. «Եթէ դանոնք նա կեցնեմ զԱստուած վշտացնելէ մէկ անգամ միայն, իմ աշխատութիւնս ի գերեւ ելած չեմ համարիր:»

Ինչ քանի՛ քանի՛ հաստատութիւններ ծնունդ առին իւր անվհատ կամքէն ու բարեսրտութենէն: Առաջինն է այն, ուր հաւաքեց իրենց ողջախոհութիւնը կորսնցնելու վտանգի մէջ գանձող օրիորդներն, որոնց վանքը կոչուեցաւ Սրբուհոյն Կատարինէի անուամբ: Երկրորդ և երրորդը երկու սեռէ որբերու համար, որք այնչափ կարօտ էին բարեբար ձեռքերու խնամոց: Չորրորդն է Գերմանական Վարժարանն հռչակաւոր, ցայսօր իսկ կանգուն, որոյ համար ո՛չ մի ջանք խնայեց. համոզուած ըլլալով թէ կարելի չլինէր զուցէ ուղղափառութիւնը պահպանել Գերմանիոյ մէջ, եթէ ի Հռոմ չկըթուէին անոր ապագայ քահանաներն ու եպիսկոպոսներ: Իրեն կը պարտինք նաև բարեկենդանի Քառասուն Ժամուց աղօթքները, հեռացնելու համար քրքրատոնեաներն այն օրերու մէջ գործուած մեղքերէ և խայտառակութիւններէ:

Թ.

Երանելին 65 տարեկան էր արդէն, և կը տեսչար Աստուծոյ տեսութեան: Մասնաւոր յայտնութեամբ գիտէր թէ մօտ էր վախճանը, և կը պատրաստուէր այդ երջանիկ օրուան, եւս քան զեւս զեղեցկացնելով իւր հոգին առաքինութեանց զարդերով: Յուլիսի վերջերը տկարութիւնն աւելցաւ, և որովհետև չէր կրնար պատարագել, Ս. Հաղորդութիւն ընդունեց ինչպէս նաև վերջին Օծում, յետ արտասուալից խոստովանու-

թեան : Սրբազան Քահանայապետին օրհնութեամբ զօրացեալ : Իւր մաքուր հոգին աւանդեց ի ձեռս Արարչին 1556 Յուլիս 31ին :

Այսպէս վերջացաւ կանք մը որ այնչափ օգտակար եղած էր եկեղեցւոյ և բովանդակ մարդկութեան : Բայց նա կ'ապրի իւր ոգևով և իմաստութեամբ այն բիւրաւոր որդւոց մէջ, որք Յիսուսի պաշտելի անուանու գրօշին ներքև և իւր աւանդած կանոններով կը շարունակեն իւր եզականօրէն փայլուն ու բազմաբեղուն գործը, այնչափ սիրելի երկնից որչափ ասելի գթօնոց : Կը յիշեն թէ աշակերտներն են Անոր որ ըսաւ . «Ոչ եկի պաշտօն առնուել, այլ պաշտել :» Կը յիշեն թէ ի'նչպէս Աստուածորդին ունայնացուց իւր անձը . «Ունայնացուց զանձն իւր զկերպարանս ծառայի առեալ», և կրցաւ իրաւամբ ըսել մեզ . «Ուսարուք յիցեմ զի հեզ եմ եւ խոնարհ արտի :» (Մատթ. ԺԱ. 29) : Ուստի և իրենց կրօնաւորակոն երեք ուխտերուն վրայ կը յաւելուն չորրորդ մը, որ է չընդունիլ ո'չ եպիսկոպոսութիւն և ո'չ իսկ Ծայրագոյն Վարդապետի աստիճան, այլ մնալ միշտ պարզ կուսակրօն-քահանայ :

Ի'նչ դաս անոնց որք գոյներու և տիտղոսներու համար հոգի կուտան, և չեն խորհիր թէ երկնից առջև մեծութիւնը խոնարհութեան մէջ է, և ամենէն նախանձելի պատիւն անոնցն է, որք գիտեն յոգնիլ ուրիշներէ աւելի անաղմուկ անձնուրացութեամբ :

Գրիգոր ԺԳ. Ս. Քահանայապետը 1622ին զայն սրբոց կարգը դասեց :

Ս. Իգնատիոս մեզի թողած է սպաներէն լեզուով երկու երկասիրութիւն, մին Սահմանադրութիւն (տպ. լատիներէն Հոտմ 1583) միւսը Հոգեւոր կրթութիւնք

լաւագոյն տպագրութիւնն ի Մարթինէ, 1887 Ղիլգատ
 Հրատարակուած է նաև Սուրբին թղթակցութեանց ամ-
 փոփոյքը (Մարտիս 1874—90 վեց հատոր), *
 2 Օգոստ. 1934,
 Տօն Թագուհոյն Հրեհակաց

ԱՌՍԾԲ ԵՒ ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆԵՐ

ՍՐԲՈՅՆ ԻԳՆՍՏԻՈՍԻ

Ա. Խոնարհութիւն

1. Գրեթէ միշտ տգիտութիւնը եւ կոյր անձնասիրութիւն մըն է որ ծուռնդ կուտան սնափսռութեան:
2. Լաւագոյն է մարդասպանի մը դաշոյնով ելնել այս աշխարհէն քան իյնալ սնափառութեան գերութեանը մէջ:
3. Մի՛ փորձէք թռչիլ թեւեր ունենալէ առաջ:
4. Վանքին բոլոր կրօնաւորք առարինութեան օրինակներ կուտան ինձ. ես ինձմէ միայն կը գայթակղիմ:
5. Ո՛հ, ո՛րչափ պատրանքի մէջ են անոնք, որ ինքզինքնին բաւական կարող կարծելով՝ հոգիները ղեկավարելու փառասիրութիւնն ունին:
6. Նա որ կ'աշխատի ընկերին փրկութեան, շատ աւելի պիտի յաջողի՝ լինելով միշտ խոնարհ ու համեստ քան եթէ հրամայէր վէտութեամբ, եւ աւելի արագ պիտի յաջողի՝ խոնարհելով քան հրամայելով:
7. Հոգեւոր կեանքի մէջ ինչպէս ուրիշ ամէն բանի մէջ, մեծապէս օգտակար է՝ յառաջադիմելու համար՝ ունենալ մէկը որ մեզ իմացնէ մեր թերութիւնները:
8. Անոնք զորս անուատոհմ ծնունդ մը, գիտութիւն եւ հանճար կը բարձրացնեն ի վեր քան զայլս, պարտին ուրիշներէ աւելի քաշակիրթ լինել անձնուրացութեամբ, որովհետեւ իրենց

խօսքերով եւ իրենց գործերով շատ ազդեցութիւն կ'ունենան ի բարին եւ ի չարն ըստ օրինակին զոր կուտան:

9. Եթէ կ'ուզէք որ ձեր ձեռնարկութիւնք յաջողին, սկսեցէք նուազ բարձր գործերով, այսու պիտի ստանաք ամենէն վսեմներուն համար օժանդակութիւնն Անոր որ իւր շնորհքը կուտայ խոնարհաց եւ կը զլանայ հպարտներու:

10. Երբ մարդ սահմանուած է մշակելու Տիրոջ այգին, հարկ է պատրաստուիլ խոնարհութեամբ եւ անձին արհամարհանօք՝ այն կարեւոր պաշտօնին զոր պիտի ունենայ կատարել:

Բ. Հնազանդութիւն

*
* *

1. Հնազանդութիւնը դուստր է խոնարհութեան, դայեակը սիրոյ, քնկեր արդարութեան, առաջնորդ եւ տիրուհի բոլոր կըրօնաւորական առաքինութեանց, մայր համաձայնութեան եւ եւ եղբայրութեան, նաւահանգիստ մը խաղաղ եւ անքոյթ, մըշտատեւ ու հեշտալի խնջոյք մը հոգւոյն համար:

2. Հնազանդութեամբ կ'ընդունինք Աստուծոյ ամէն ինչ որ կը խնդրենք. որովհետեւ ինչպէս կ'ըսէ Ս. Գրիգոր. «Եթէ մենք հնազանդինք մեր Մեծաւորաց, Աստուած պիտի հնազանդի մեր աղօթից»: Իմաստուն մը ըսած է. «Ինչ որ կը պահսեցնենք կամապաշտութենէ, կը յաւելունք առաքինութեան»:

3. Անոնք որ վեհանձն ճիգով մը կը կ'որոշեն հնազանդիլ, կը բարձրանան շատ մեծ արժանիքի, եւ պիտի համոզուինք ասոր եթէ մտածենք թէ հնազանդութիւնը կը նմանի մարտիրոսութեան:

4. Թո՛ղ միւս կրօնաւորական Միաբանութիւնք զմեզ գերազանցեան պահօք, հսկմամբք ու մարմնոյ ուրիշ խտամբերութեամբք, իսկ Յիսուսեանց յատկանիշը եւ տիրող առաքինութիւնը թո՛ղ ըլլայ կատարեալ հնազանդութիւն:

5. Մի՛ նկատէք Մեծաւորին անձին մէջ՝ մարդ մը ենթակայ վրիպանաց եւ մարդկային թշուառութեանց, այլ նկատեցէք անոր մէջ զՅիսուս Քրիստոս ինքն, որ է իմաստութիւն գերագոյն, բարութիւն անճառ եւ սէր անհուն, որ չի կրնար սխալիլ եւ չուզեր զձեզ սխալեցնել:

6. Արպէս զի մէկը կարենայ առաջնորդ լինել այլոց եւ զա-

նոնք լաւ կառավարել, պէտք է որ կանխապէս ամեն հոգ տարած ըլլայ հնարակներու, եւ թէ վարպետ եղած ըլլայ սոյն կարողութեամբ:

7. Եթէ գտնուէր մէկը ձեր մէջ, որ ուզէր ինքն իւր անձին առաջնորդ լինել, թո՛ղ լսէ ինչ որ կ'ըսէ Սուրբ Բեռնարդոս «ինչ որ կ'ընէք առանց հաւանութեան եւ կամաց ձեր հոգեւոր հօր, սնափառութիւն է լոկ եւ պիտի մնայ առանց վարձատրութեան»: Թո՛ղ յիշէ դարձեալ Ս. Գրոց այս խօսքը. «Ձեպատակիլ ատելի լինել է Աստուծոյ, նման անոնց որք կը խորհրդակցին սատանին հետ. եւ չհնազանդիլ համագոր է կռապաշտութեան մեղքին»:

8. Կուգեմք եւ Ձեմ ուզեք չեն բնակիր հոս, (Յիսուսի Ընկերութեան մէջ):

9. Խոնարհութիւն մը որ հակառակ է հնազանդութեան չունի ո՛չ մի արդիւնք:

*
* *

Գ. Խոնարհութիւն

1. Կեանքի անմեղութիւնն եւ սրբութիւն շատ արժէք ունին ըստ ինքեան, եւ ուրիշ ամէն բանէ գերազանց են անբաղդատելիօրէն. սակայն եթէ միացած չեն խոնարհութեան եւ մարդոց հետ վարուելու գիտութեան հետ, թերի են, անզօր եւ անյարմար զայս կառավարելու:

2. Տեսնել կանխաբան ինչ որ պարտինք ընել, եւ բնութեան ենթարկել ինչ որ ըրինք, ահա երկու յոյժ ապահով կանոններ լաւ գործելու համար:

3. Աստուծոյ ծառայութեան վերաբերեալ գործոց մէջ, անոնք որ կ'ուզեն լինել չափազանց խոնարհ, քիչ անգամ կ'ընեն մեծ եւ դիւցազնակ ան գործք: Այլ երբեք պիտի ձեռնարկէ նըշանակալից բանի մը նա՞ որ կը վախնայ ամենադոյզն դժուարութիւններէ...: Ուստի Իմաստունը մեզ կուտայ սոյն խրատը. «Մահման դէ՛ք ձեռ խոնարհութեան»: Ձէ պատշաճ արդարեւ թէ այն առարկանութիւնն որ պարտի միւսները չափաւորել եւ կանոնաւորել, ինքը պակաս կանոնէ եւ չափաւորութենէ:

4. Յգտակար լինելու համար ընկերին, պարտինք հետագօտել իւր տրամագրութիւնները... փնտռենք միշտ նպաստաւոր ժամանակը խօսելու եւ գործելու:

5. Միեւնոյն հիւանդութիւն մը չպարտի անփոփոխ դարմանուիլ միեւնոյն եղանակաւ, այլ ըստ բնութեան հիւանդին, պէտք է գործածել տարբեր, եւ երբեմն իսկ բոլորովին հակառակ դեղեր:

Գ. ԱԵՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԲՆԿԵՐԻԸ

1. Սիրոյ գործ մը անհամամատ աւելի կ'արժէ քան աշխարհի բոլոր ակին:

2. Աստուծոյ առատածեռնութիւնը կը լնու տեղը այն շահուն գոր կ'արհամարհենք իւր սիրոյն համար:

3. Կեանքը անտանելի պիտի լինէր ինձ այն վայրկեանէն, յորում նշմարէի յիս բան մը որ չվերաբերէր բոլորովին Աստուծոյ:

4. Զբաւեր որ ես ծառայեմ Աստուծոյ, պէտք է որ ամեն սրտեր զայն սիրեն եւ բոլոր լեզուներ գովեն զայն:

5. Թող իմ մարմինս հազար կտոր ընեն, թող զիս պահեն քաւարանի կրակներուն մէջ մինչեւ վերջին դատաստան, միայն թէ այսու յաջողիմ մի միակ մեղաւորի սիրցնել զԱստուած, ինքզինքս գոհ եւ երջանիկ կը համարիմ:

6. Մի միակ փառասիրութիւն կայ օրինաւոր, այն է սիրել զԱստուած. եւ ի վարձատրութիւն այս սիրոյ, միշտ եւս աւելի սիրել զայն:

7. Սիրոյ ամենէն մեծ նշանը տառապիլն է. տառապիլ Աստուծոյ համար, ահա՛ ուրեմն ճշմարիտ ուրախութիւն, ահա գերագոյն երջանկութիւնը:

8. Ի՞նչ կայ ինձ համար աւելի ցանկալի քան տառապիլ Յիսուսի Քրիստոսի համար եւ մեռնիլ հոգիները փրկելու համար:

9. Եթէ սիրէիք զԱստուած ի բոլոր սրտէ, պիտի հասկնայիք թէ երկրի ամէն հեշտութիւնը վասն Աստուծոյ տառապելու երջանկութեան հետ չեն կրնար բնաւ բաղդատուիլ:

10. Ո՛վ որ կը կրէ զԱստուած իւր սրտին մէջ, արքայութիւնը կը կրէ ամենուրեք իրեն հետ:

11. Անոր որ ունի զԱստուած՝ ոչինչ կը պակսի:

12. Եթէ հարկ լինէր մեռնիլ մէկ օրուան մէջ հազար անգամ հոգի մը փրկելու համար, պիտի հաւանէի սիրայօժար:

13. Ամենէն մեծ մեղսորդներուն հետ վարուեցէք բարի մօր մը նման որ իւր հիւանդ զուկին համար կարեկցութիւն է անսպառ, աւելի գորովալիր կը գգուէ զայն, աւելի խնամքներով կը շրջապատէ, սիրոյ ա ելի նշաններ կը շոյալէ անոր քան եթէ լինէր ողջ եւ առողջ:

14. Որչափ աւելի բացած է որ իւր աչքերն այլոց թերութեանց վրայ, այնչափ աւելի զանցառու է ճանաչելու իւր թերութիւնները:

15. Չարը զիւրաւ կը կասկածի իւր եղբարց մասին:

16. Շատ գոյշ եղէք մէկու մը գործերը զատապարտելէ, ի նկատ առէք ընկերին զիտաւորութիւնը մանաւանդ, որ յահախ անմեղ ու բարի է, թէեւ արտաքին գործը երեւի յոռի:

17. Ոչինչ ըրէք, ոչինչ գրեցէք, որ բնոյթն ունենայ ռի կամ զառնութիւն յառաջ բերելու:

18. Եթէ վնասակար բան մը խնդրեն ձեռնէ, մի՛ հաւանիք, բայց մերժելով հանդերձ՝ այնպէս ըրէք որ խնդրողին բարեկամութիւնը պահէք:

19. Եթէ ճշմարտութիւնը չընկերանայ սիրոյ եւ քաղաքավարութեան, պիտի չըլլայ այլեւս ո՛չ եղբայրսիրութիւն եւ ո՛չ բարեկրթութիւն, այլ խարկանք եւ սնափառութիւն:

20. Չբաւեր զԱստուած միայն ունել ի նկատի, պէտք է նաեւ զմարդիկ առնուլ ի նկատ վասն Աստուծոյ:

21. Ո՛վ որ կ'ուզէ օգտալար լինել այլոց, պէտք է նախ վառէ սիրոյ կրակը իւր սրտին մէջ, պարտի անմատչելի լինել աշխարհի ունայն երկիւղներուն փախչիլ փառասիրութենէ իբրեւ ժանտախտէ, եւ արհամարհանք եւեթ ունենալ հաճոյից հրապոյրներուն:

22. Մարդոց բարեացակամութիւնը շահելու համար վասն ծառայութեան Աստուծոյ, հարկ է յարմարիլ անոնցմէ իւրաքանչիւրին, ոչինչ արդարեւ կրնայ աւելի մտքերը զրաւել քան նմանութիւնն ճաշակաց եւ հակամիտութեանց:

Ե. Յոյս եւ վստահութիւն

1. Այնչափ աւելի պարտինք յուսալ յԱստուած որչափ ամեն ինչ կ'երեւի յուսահատեալ. ուր մարդկային միջոցները կը սպառին՝ հոն է որ աստուածային օգնութիւնք մեզ կը սպասեն:

2. Աստուած վեհանձն է միշտ, իւր ձեռաց մէջ պիտի գտնեմ ինչ որ պիտի չգտնեմ մարդոց ձեռքերուն մէջ. եթէ ասոնք բան մը չեն տար ինձ, Աստուած պիտի տայ ամեն բան:

3. Եթէ կը նշմարեմ հազար պատճառներ երկիւղի, շատ աւելի շարժառիթներ եւս կը գտնեմ յուսալու... Եւ որ կ'առաջադրէ մեծ բաներ ընել Աստուծոյ համար, չպարտի ջանալ լինելու չափէն աւելի իմաստուն և նայելու և եթ իւր գլխոյն և իւր ձեռքերուն, ըսել կ'ուզեմ իւր ճարտարութեան և անձնական միջոցներուն:

4. Լաւագոյն է նկատուիլ իրրեւ յիմար մարդոց դատողութեամբ քան ամենադոյզն կերպիւ նուազեցնել վստահութիւնը զոր պարտինք Աստուծոյ:

5. Երբ սատանան կը պաշարէ մեր հոգին անվրստահութեան մտածումներով և կը ջանայ ձգել զմեզ փոքրոգութեան մէջ, ժամ է արդ զարթուցանելու մեր քաջութիւնն՝ Աստուծոյ բարեաց և ողորմութեան յիշատակաւ, նկատելով թէ ի՞նչ բաղձանօք և ո՞րպիսի սիրով կը սպասէ մեզ փրկելու համար:

6. Իրերն այն արժէքն ունին և եթ զոր անոնց կուտայ Աստուած:

7. Ի՞նչ պիտի լինէր յուսոյ առաքինութիւնն, եթէ ունենայինք ամեն ինչ և կամ տեսնէինք յստակօրէն թէ ի՞նչպէս պիտի յողթենք զժուարութեանց:

Հաւանութեամբ կրօնական իշխանութեան

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM0915

255.07.02.01.06.00/

Հանդիմով ընթերցայ եւ կը հաստատեն ստորագրու-
թեամբս թէ հաւատոյ ու բարոյից հակառակ որ եւ է
բան չկայ:

27 Օգոստոս 1934 Հ. ՀՄԱՅՆԱԿ Ի. Վ. ՀԱՄԱՐԱՐԵԱՆ